ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ՝ ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը՝ տեղեկանալով ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի օգոստոսի 6-ին տեղի ունեցած սպանության մասին, Նյու Յորքից հեռագիր է հղել Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին:

Վեհափառ Հայրապետը դատապարտելով կատարված սպանությունը, Իր ցավակցությունն է հայտնում Հանրապետության նախագահին, կառավարությանը և հանգուցյալ դատախազի ընտանիքի անդամներին:

Հեռագրում մասնավորապես ասվում է.

«Մեծ. Տիար Ռոբերտ Քոչարյան,

Վսեմաշուք Նախագահ Հայաստանի Հանրապետության,

Սրտի խոր վշտով իմացանք ցավալի լուրը Հայաստանի Հանրապետության Գլխավոր Դատախազ՝ Հենրիկ Խաչատրյանի անարգ սպանության:

Դատապարտում ենք վատ արարքը և կոչ ենք անում, որ ոչ մի ուրիշ նման արարք չփորձվի մեր Մայր Հայրենիքում: Դա անվայել է և անհարազատ Հայ ժողովրդի արժանապատվության և բարոյական նկարագրին ու վարկին:

Աղոթում ենք առ Աստված, որ նրա հոգին ընդունի իր երկնային խաղաղության մեջ: Հենրիկ Խաչատրյանի վաստակը միշտ հարգանքով ու երախտիքով կհիշվի Հանրապետության ամրացման պատմության մեջ:

Մեր սրտագաց ցավակցություններն ենք հղում Ձեզ, մեր հայրենի կառավարության և հանգուցյալ Հենրիկի տիկնոջ և ընտանիքի բոլոր անդամներին:

Վշտակցական սիրով և աղոթքով

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»